

Ազգայիններն անհամբեր յուլիս 11 - ին կը սպասեն՝ Պատրիարքին բերնէն աւետիս առնելու համար:

Ես ալ սպասեմ ուրեմն:

10 Յուլիս

Վերջին ռուս - թուրքական պատերազմը չհրատարակուած՝ Միդիատ բաշան ընդի. ժողով գումարեց հոս եւ ամեն ազգի գլուխները հրաւիրելով իրենց հարցուց.

–Թող կու տա՞ք, որ մեր կառավարութեան անկախութեան վնասեն:

–Թող չենք տար, թող չենք տար, պատասխանեցին իրեն:

–Ռուսիոյ դէմ կ'ուզէ՞ք պատերազմիլ:

–Այո, պատերազմիլ կ'ուզենք, կուրծքէն զարնուելով մեռնել կ'ուզենք, քան թէ մեր անկախութիւնը վնասուած տեսնել... Օ՛ո, մեր անկախութեան մատ չենք դպցուներ, այդ չըլլար:

–Բայց մեծ զոհողութիւններ պէտք է, կարո՞ղ էք դիմանալ:

–Կարող ենք, անօթի կմնանք եւ կ'պատերազմինք, առաջ Աստուած:

Այս պատասխանները տուին գրեթէ բոլոր ազգին գլուխներն, որք ուրիշ կերպով չէին կարող պատասխանել, կքարկոծուէր, եթէ յանդգներ մէկն ըսել չպատերազմինք:

Այս օրերս գրոյց կ'պտըտէ, թէ նմանօրինակ ընդի. ժողով մը պիտի գումարուի եւ կարծիք պիտի հարցուի եղեր, թէ Յունաստանի դէմ պատերազմելո՞ւ է թէ չէ:

Եթէ յաղթող ելնենք, ի՞նչ պիտի շահինք.

Խնդիրը հոս է:

Եւրոպան մեզի պիտի ըսէ.

«Մեծ քաջութեամբ կռուեցաք եւ Յունաստանին յաղթեցիք, ապրիք. բայց որովհետեւ Յունաստանը մեծ վնաս ըրաւ՝ – ուստի պէտք է որ դեսպանախորհրդոյ որոշած տեղերէն զատ ուրիշ քանի մը մեծ քաղաքներ ալ տանք խեղճին, որ վնասը գոցուի»:

Որչափ շատ յաղթենք՝ այնչափ շատ տեղ կ'կորսնցնենք եւ միշտ պատերազմել կ'ուզենք....: